

Արձանագրություն N 5
«ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/1Ն» ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«19» փետրվարի 2019թ.
ժամը՝ 15:30

Մասնակցում էին՝	
Հանձնաժողովի նախագահ՝	Կ. Գասպարյանը
Հանձնաժողովի անդամներ՝	Լ. Հարությունյանը, Լ Ոսկանյանը,
	և Ա. Պապյանը
Հանձնաժողովի քարտուղար՝	Ա. Պետրոսյանը
Բացակայում է՝	Ն.Մեսրոպյանը

1. Գնանշման հարցում ընթացակարգի ստացված փաստաթղթերի մասին

(Կ. Գասպարյան)

18.02.2019թ. ստացվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունը, որի համաձայն «Արմատրոյ» ՍՊԸ-ն և «Հալի Բոնսալթ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, իսկ «Արցախճան» ինստիտուտ» ՓԲԸ-ի մասով ՀՀ ՊԵԿ հարկային ծառայությունը Արցախի հանրապետության հարկ վճարողների վերաբերյալ հաշվառում չի վարում: Նույն եզրակացության համաձայն՝ «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է նախատեսված շեմը գերազանցող՝ 112,878 ՀՀ դրամ հարկային պարտավորություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

2. Գնանշման հարցում ընթացակարգի արդյունքների գնահատման և ստացված եզրակացության ամփոփման մասին

(Կ. Գասպարյան)

Հանձնաժողովը քարտուղարի կողմից առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և Կոմիտեից ստացված եզրակացությունը տրամադրվել է հանձնաժողովի անդամներին:

Հանձնաժողովը որոշեց.

1. «Արմատրոյ» ՍՊԸ-ի, «Հալի Բոնսալթ» ՍՊԸ-ի և «Արցախճան» ինստիտուտ» ՓԲԸ-ի հայտերը գնահատել բավարար:

2. «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անաբավարար: Հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 44-րդ և 45-րդ կետերով՝ որոշեց «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 12-րդ և 17-րդ չափաբաժինների մասով մերժել և ՀՀ Գնումների

մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն համապատասխան ընթացքը լուծելու համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

3. Գնանշման հարցում ընթացակարգի ընտրված և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ որոշում ընդունելու և հարկային հարցում կատարելու մասին մասին

(Կ. Գասպարյան)

Հանձնաժողովը որոշեց՝

1. ընտրված /հաղթող/ մասնակիցներ ճանաչել՝

- «Հալիի Քոնսալթ» ՍՊԸ-ին՝ 1-ին, 2-րդ և 3-րդ, 15-րդ չափաբաժինների մասով,
- «Արմատրոյ» ՍՊԸ-ին՝ 4-րդ, 5-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ, 14-րդ, 16-րդ չափաբաժինների մասով,
- «Արցախճան» ինստիտուտ» ՓԲԸ-ին 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ չափաբաժինների մասով:

2. Հիմք ընդունելով ՀՀ Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասը և սույն արձանագրության 2-րդ մասի 2-րդ կետը՝ 12-րդ և 17-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչել.

- ՀՀ ՍԵՅՄՍԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ-ին 12-րդ չափաբաժնի մասով,

- «Արցախճան» ինստիտուտ» ՓԲԸ-ին 17-րդ չափաբաժնի մասով:

1. Հարցում ներկայացնել ՀՀ պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար:

2. Հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ, քան ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից եզրակացության և փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 15:30-ին, ՀՀ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն, 2-րդ հարկ, N 208 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝

Անդամներ՝

Քարտուղար՝

Կ. Գասպարյան

Լ. Հարությունյան

Լ. Ոսկանյան

Ա. Պապյան

Ա. Պետրոսյան